ԴԱՒՐՈՍ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար տարեկան	10	ֆր.
» » վեցամսեայ	5	»
Արտասահմանի համար տարեկ.	12	»
» » վեցամսեայ	6	»

ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է ղրկել հետեւեալ հասցէով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և խմբագիր Դաւրոս շաբաթաթերթի

Х. Чакжрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Оттоворникъ Н. Драгулевъ.

H. TCHAKÉRIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկած գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ։ Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ ետ չեն տրուիր։ Ծանուցման տողը 20 սնթ.։ Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն։ Ծանուցմունք կ'ընդունուին ամէն լեզուաւ։

Ա. ՏԱՐԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ 12 ՄԱՅԻՍ 1898 — ԹԻՒ 13

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

ՀՐԷՇԱՅԻՆ ՄԻ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ

Մօտաւորապէս երեք տարի է որ ամենայն հայոց Հայրապետ Վեհափառ Հայրիկի կողմանէ, առաջին անգամ՝ ըլլալով այս կողմեր ղրկուած Ռումանիոյ և Պուլկարիոյ այցելու հովիւ երջանկայիշատակ Տ. Մկրտիչ Վրդ. Տէրունեան, Ռումանիոյ Սուլինա քաղաքը հասնելէ ետքը, այնտեղէն անարգանօք արտաքսուեցաւ ռումէն կառավարութեան ձեռքով, զոհ երթալով չարագործներու զրպարտութեանց։ Հայ ժողովուրդը չէ մոռցած անշուշտ նաեւ թէ՝ մեր այդ խեղճ բարեկամը Պուլկարիոյ մէջ ալ անընդհատ հալածանքներու ենթարկուած էր անյայտ չարագործներու կողմէ, որոնց հետեւանքով օր մ'ալ իր ածխացած ոսկորները թողուց այնտեղ, ուր այժմ կառուցուած է առաջնորդարան-ուսումնարանի փառաւոր շէնքը. իսկ այդ փառաւոր շէնքին դէմ, եկեղեցիին պատին կից՝ մնացած է մի անշուք սեւ խաչի տակ բուռ մը սեւ հող մեր նահատակ սիրելիին տեղ։

Մեռաւ այն անձնուէր գործիչը՝ զոհ երթալով, զոհ երթալով անյայտ մնացած մի դաւադրութեան և գուցէ անոր կեանքին դաւողները այսօր եւս մեր շուրջը կը գտնուին և նորանոր դաւեր կը պատրաստեն ուրիշներուն՝ օգտուելով մեր անհոգութենէն։ Այո՛, օգտուելով մեր անհոգութենէն, որովհետեւ եթէ Ռումանիայի և Պուլկարիոյ հայերը մի քիչ աւելի հոգածու գտնուէին և Ռումանիոյ Սուլինա քաղաքէն սկսելով հետապնդէին այդ դաւադրութեան հեղինակները գտնելու, գուցէ մենք ականատես չը լինէինք այն ահաւելի վախճանին, և այսօր փոխանակ մէկ բուռ սեւ հողի, այն ծանօթ և անձնուէր գործողը՝ մեր աչքի առջեւ կենդանի ունենայինք, և նորանոր սոսր դաւերու ակամայ ականատես ըլլալու հարկին մէջ չը գտնուէինք։

Թէեւ հանգուցեալի առեղծուածային վախճանէն յետոյ, շատ անգամ՝ այդ մտածումներն ունեցած ենք, բայց մեր այդ մտածումները այսօր հրապարակաւ գրել ստիպեց մեզ, Մայիս 6/18 թուականով Ռուսչուքէն մեզ ղրկուած է հետեւեալ նամակը։

Յարգելի խմբագիր,

«Կաթողիկոսական այցելու հովիւ Գեր. Տ. Արսէն Վ. Վեհունի իր անցագիրը ռումանական հիւպատոսարանէն օրեր առաջ օրինաւոր կերպով վաւերացնել տալով, երէկ, այսինքն ամսոյս 5ին կէս օրէն յետոյ ժամը 4ին քաղաքէս մեկնեցաւ Ճըրճօվա, այնտեղէն Պուքրէշի ճամբով Աւստրիա անցնելու համար։ Բայց, այսօր առաւօտեան ժամը 8 1/2 ին շոգենաւով իրեն Ռուսչուք վերադարձած ըլլալը և Ռումանական հիւպատոսարանը երթալով իր ճամբորդութեան յետաձգուած ըլլալը լսելով մեծ զարմանք առաջ եկաւ Ռուսչուքի մէջ։ Այդ տպաւորութեան տակ կշտապեմ գրել Ձեզ եղելութիւնը ստոյգ աղբիւրէ առած տեղեկութեանցս համեմատ։

Գեր. Արսէն Վ. Վեհունի, երբ Ճըրճօվա կը հասնի, անցագիրը ձեռքէն առնելով զինքը մաքսատուն կը տանին և այնտեղ մէկ ժամու չափ հարցաքննելէ և Պուքրէշ մեկնող շոգեկառքի հասնելու ժամը անցնելէն ետքը, իր պակաժները նաւամատոյցէն մաքսատուն փոխադրելով, այն տեղ փողոցին մէջ բանալ կուտան և մաքսատան հակառակ բան մը չը գտնալով, Գեր. հայր սուրբը ոստիկանութեան պաշտօնատունը կը տանին, այն տեղ եւս մէկ ժամու չափ հարցաքննելէ և իր Արսէն վարդապետ ըլլ'ալը հաստատող պաշտօնական վաւերաթղթերը տեսնելէ ետքը, զինքը ազատ կը թողուն, այն գիշեր իր ուզած տեղը մնալով երկրորդ օրը Պուքրէշ մեկնելու համար։ Չի մոռնանք յիշել որ, մաքսատան և ոստիկանատան մէջ ճիշդ երկու ժամ տեւող հարցաքննութեան ժամանակ, նոյն իսկ ամենատարրական քաղաքավարութիւն ցոյց չէ տրուած իր դէմ։ Ռումէն կառավարութեան Գեր. Արսէն վարդապետի հետ այսպէս վարուելու առիթ ընծայած էր Ռուսչուքէն Մայիս 2/14 թուականով գրուած ռումէներէն մի նամակ, հետեւեալ իմաստով,

«Այս օրերս, այսինքն երեքշաբթի կամ չորեքշաբթի օրը, Ռուսչուքէն Ճըրճօվա պիտի անցնի Արսէն վարդապետ անուն անցագրով մարդ մը, որը սոսկալի մի յեղափոխական է և Կ. Պոլսէն կուգայ Ռումանիա անցնելով՝ այնտեղ գտնուող հայերը թիւրք կառավարութեան դէմ գրգռելու, և իր գլխաւոր դիտաւորութիւնն է Կալաց և Իպրաիլ երթալով, այնտեղ գտնուող Հայաստանցիներուն մէջ խռովութիւն յարուցանել, այդ մարդու իսկական անունն է Գրիգոր, որը Սիլիսթրէ գտնուող Արսէն վարդապետի անցագիրը գողնալով յաջողած է, կերպով մը այստեղի հիւպատոսարանէն վաւերացնել տալ. ի նկատի ունենալով ռումէն կառավարութեան շահը, կը յանձնարարեմ Ձեզ որ այդ մարդը այդտեղ հասածին պէս վերադարձնէք Ռուսչուք, որպէսզի քննութիւն լինելով խնդիրը պարզուի։ — Մի Ռումէն հպատակ»։

Ռումէն ոստիկանութիւնը, ահա այդ անստորագիր նամակով եղած զրպարտութեան փոխարէն, Արսէն վարդապետի ցոյց տուած իր իսկականութիւնը հաստատող վաւերաթղթերը բաւական համարելով՝ զինքը ազատ թողուցած է երէկ գիշեր. իսկ այս առաւօտ երկաթուղիի մեկնելու պահուն՝ կայարանէն հայր սուրբը ետ դարձնելով, ոստիկանութեան հսկողութեան տակ վերադարձած են Ռուսչուքի ռումանաց հիւպատոսարանը, մինչեւ այդ տեղ հասնելը հայր սուրբը իրեն եղած անարգանքին համբերատար ն ղա էր, սակայն երբ ժամանակը կուգայ հիւպատոսին ներկայանալու, հայր սուրբը սաստիկ կերպով կը բողոքէ, ըսելով թէ «Պարոն հիւպատոս, երբ 5 ամիս առաջ Աւստրիա մեկնելու հրահանգ ստացայ, այստեղի աւագերէց Տ. Կարապետ հօրը գրեցի որ գայ Ձեզմէ տեղեկութիւն առնէ թէ՝ Ռումանիայէն անցնելու թոյլտուութիւն կա՞յ թէ ոչ։ Արժ. Տ. Կարապետ հայոց վարժարաններու տեսուչ Տիար Կիւրեղեանի հետ ձեզ ներկայացած ժամանակ, դուք կատարելապէս վստահեցուցած էք զիրենք թէ՝ կրնամ անցնիլ Ռումանիայէն, ըսած էք նաեւ թէ «Երբեք Ռումանիան պատուաւոր անձերու դէմ արգելք չէ յարուցած և ոչ ալ մասնաւորապէս հայերուն դէմ, այլ միայն ամէն ազգի թափառաշրջիկ ու կասկածոտ մարդոց մուտքը արգիլուած է։ Ռումէն կառավարութեան թըշնամիները եւրոպական թերթերուն մէջ կարգ մը զրպարտութիւններով կուզեն Ռումանիոյ վարկը կորցնել Եւրոպացւոց առջեւ, անոր համար կը խնդրեմ որ այս ըսածներս Ձեր լրագիրներուն մէջ ալ հրատարակել տաք» Պ. հիւպատոս, Ձեր այդ բացարձակ ապահովութիւնը պաշտօնապէս ինծ գրուած լինելով, ես փոխանակ Պուլկարէն Սօֆիայի ճամբով Աւստրիա անցնելու այս ճամբով եկայ, ուրեմն և իմ անցագրիս Ձեր կողմանէ վաւերացուելէն ետքը, այս երկու օրուան մէջ ինծ եղած անարգանքը պէտք չէր պատահէր, որովհետեւ ես Ռումանիոյ մէջ ո և իցէ գործ չունենալով՝ Ռումանիոյ պէս անհիւրընկալ երկիր մը մնալ չպիտի ուզէի, որով և այս անախորժ անարգանքներուն ենթարկուելէ ազատ պիտի ըլլայի»։ Հիւպատոսը որ հայր սուրբին այդ արդարացի բողոքներուն պատասխանելու և ոչ մէկ հնար չունէր, գործին մէջէն ելնելու համար, դի-

(Շար. տե՛ս չորրորդ երես)

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. 12 թիւԷՆ)

Երթաք բարեա՛ւ բռինք եւ թողնենք որ արշաւախումբը յառաջանայ դէպի Խանասորը. իսկ մենք պահ մը դառնանք Ատրպատական, մտնենք հայ ժողովրդի ամէն դասակարգի սրտերի, մտքերի եւ հոգիների մէջ, յանուն պարտաճանաչութեան հետաքրքիր լինենք, հասկանանք թէ ի՛նչ անհուն ուրախութեան գուրգուրանքներով եւ ամէնուս փայփայելի յոյսերի իրականացման անհուն ջերով վառուած ընդունեցին Դաշնակցականներին եւ յետոյ ի՛նչ ատրճանի սե՛ւ, տխուր տպաւորութեանց տակ, խորին զզուանքով ու անսպասելի հիասթափմամբ ճանապարհեցին նրանց։

Անցեալներ արդէն ցոյց տուինք թէ՝ 1896 թուականի ամառն էլ 250ի մօտ հայդուկներ կանչուեցան Դաշնակցական կոմիտէից եւ մինչեւ աշնան կէրան խըմեցին եւ ապա փառք տալով հաց տուող տիրոջ իրենց տեղերը ցրուեցան։

1897 թուականի, այսինքն անցեալ տարուան սկզբից էլ արդէն երբոր կըրկին թափուեցան Ատրպատականը 400 Դաշնակցական հայդուկներ եւ անպատ դար հրացան յուսին, սուրը ձեռքերնին սկսեցին երեւալ հրապարակի վրայ, հայ տարրը տեսնելով դրանց ի ցոյցս մարդկան արարքները, չլացաւ վայրկեան մը եւ Հայաստանի ազատութեան փըրկաւէտ հրեշտակներ կարծելով, ամեն տեսակ խրախուսանք եւ օգնութիւն չը խնայեց։

Անցաւ մի փոքր ժամանակ, ժողովուրդը տեսաւ որ Դաշնակցականները իրարու ետեւէ յաջորդաբար սկսեցին թշնամու համար պատրաստած սուրը նախապէս եղբօր, ընկերոջ արիւնով ներկել, թրջել, նրբքին կռիւները, ընկերական դաւերը վերջ չունէին, իսկ իրենց, ժողովրդի հետ՝ առաջ Աստուծոյ առաքեալներ ձեւացողները՝ սկսեցին բացարձակապէս իբրեւ իրենց ճորտերի, սորուկների հետ վարուիլ, առնում էին ի՛նչ որ ուզում էին, անում էին ի՛նչ որ ցանկանում էին . . . ։ Հայդուկին հիւրասիրող տան տէրը նրա ստրուկ գերին էր դարձել, եւ ի՞նչպէս կարող էր դիմադրել, նրա քմահաճոյքներին լիովին բաւականութիւն չտալ, չատ անգամ աչքերը գոցել, չտեսնելու համար իր տան մէջ, իր աչքին առաջ կատարուած արարքները . . . . . քանի՛ որ . . . . քանի՛ որ մահուան սպառնալիք կար տան տիրոջը վրայ։

Սալմաստի Մալհամ գիւղի մէջ նոյն գիւղացի Դաւիթ անունով մէկը երբ հայդուկներից մէկին խրատ կը խօսէ իր սխալ, ըմբոստ վարմունքի համար, Դաշնակցական հայդուկի պատասխանը, հրացանի ճայթիւնը, որոտը կը լինի եւ երիտասարդ գիւղացին ճակատից գնտակ ստանալով անմիջապէս գետինը կը փռուի եւ անկենդան կը դիականանայ։ Երկրորդ առաւօտ դիակը թաղելու համար յուղարկաւորութեան գացինք։

Նոյնպէս երբ յաջորդաբար սպանուեցան Դաշնակցական կոմիտէի որոշմամբ Թաւրիզի մէջ խմբապետ Շէկօն, Սալմաստի մէջ Փայաջուկ գիւղում Սարգիսը, Վանեցի Աւետիսը (Միսաք Փարիկեան), Ստեփան Տէր-Ստեփանեանը, այդ եղբայրասպանութիւններն ահռելի սարսափ տարածեցին ժողովրդի վրայ։

Պատռեցաւ խորհրդաւոր քողը, Հայ ժողովուրդը արդէն ճանչեց իր հիւրերին, այն մարդկանց՝ որոնց վրայ դեռ երէկ երբ նա նայում էր իբրեւ անձնազոհ, գերբնական արարածների վրայ. ո՛չ, այսօր այլեւս փոխեց իր հաւատքը, երէկուան իր պաշտելու չափ սիրած, եղբօր մը պէս յարգած մարդկանց այս օր ատում էր, զզուում էր ի խորոց սրտէ եւ վախենում էր նրանցից ինչպէս Եէնիչէրիներից, ինչպէս քիւրդ հրոսակներից . . . . ։ Ահա՛, ի՛նչ անդունդներ երէկուան եւ այսօրուան մէջ, երէկուան սէրն ու գուրգուրանքները իսկ այսօրուան վախն ու զզուանքները . . . ի՛նչպէս համեմատել։

Խեղճ Աղբակեցի օրավարձով աշխատող բանուորը մի քանի կոպէկի սակարկութեան համար երբոր չը համաձայնէր այգետիրոջ կամ իրեն աշխատեցնողի հետ, այնչափ բարի օրինակ էր վերցրել Դաշնակցականներից որ հետեւեալ խօսքերով սպառնալիք կուտար «—Միթէ չե՞ս վախենում ինձանից, տե՛ս, եթէ իմ ուզած գինը չվճարես, կերթամ Յեղափոխական Դաշնակցականներին գինուոր կը լինիմ եւ այն ժամանակ վա՛յ քեզ, կեանքդ էլ, կայքդ ու կալուածքդ էլ ձեռքիցս չի ազատուի — » ։

Եւ իսկապէս ինչպէս Պարսիկ Սարվազները հայոց այգիներում տունկ ու ծառ չէին թողնում սւրում, աւրչտըկում էին, նոյնպէս վերաբերուեցան նաեւ Դաշնակցական հայդուկները մի քանի գիւղերի մէջ ։

Ոչ իր տան, ոչ իր կայքի, ոչ իր կալուածքների արդեանց եւ վերջապէս ոչնչի տէր չէր Ատրպատականի Հայ տարրը, ի՛նչ որ պակաս էին թողնում պարսիկները, քիւրդ հրոսակները՝ լրացնում էին մեր ազգասէրները°°° ։

— Երեք բռնակալութեանց ենք ծառայում, ասում էին Ատրպատականի Հայ բնիկները, Ա. — Պարսիկ կառավարութեան, Բ. — Մօտակայ սահմանի Քիւրդ աշիրաթներին, Գ. — Դաշնակցականներին։

Ահա՛, ժողովրդի արդար գայրոյթի, ցաւալի համոզման արտայայտութիւնը։ Տեսնելով իր առաջ դառն իրողութիւնները ոչ մի տարբերութիւն չէր դնում Դաշնակցականների եւ Պարսիկ ու Քիւրդ հրոսակների մէջ . . . . . ։

—«Օր մը առաջ, ժամ մը առաջ թո՛ղ հեռանան, սրանք ազգասէրներ չեն այլ — իրենց խօսքերովը ասենք— ազգակերներ են » ։ Այս էր գոչում ժողովուրդը ։

Եկաւ այդ օրը, այդ ժամը, 1897 յուլիս 21 ը։ Իսկ փոխանակ այն «Բարի մաղթանքների» ինչպէս գրում են (տե՛ս Դրօշակի 1897 տարւոյ, թիւ 12 ի մէջ) « . . . Անչափաւորեանք սրտի սեղմումով . . . Դեռ երկար լսում էր նրանց (գիւղացիների) բարի մաղթանքները, տեսնում հեռուից նրանց թաշկինակների եւ գլխարկների ծածանումը, մինչեւ որ ամպածրար լեռների լանջերում կորցրինք նրանց մեր տեսքից»։

Ո՛րքան մեծ սուտ, գիշերուան այդ խաւարի մէջ երբ երկու քայլից մէկը միւսին չէր տեսնում, Դրօշակեանները ի՞նչպէս կարողացան տեսնել Հայ ժողովրդի, գիւղացիների «թաշկինակների, գլխարկների» երեւակայական ծածանումը, այն էլ այնքան հեռուից, մինչեւ «ամպածրար լեռների լանջերում» հասնիլը ։ Նախ որ այդ տեսակ լեռներ չկան, երկրորդ՝ մինչեւ «ամպածրար» փոքրիկ հողաբլուրներ հասնիլը իրենց դուրս եկած բշեւանից ժամուկէսուան ճանապարհէ։ Ժամ ու կէս ճանապարհի հեռաւորութեան վրայ գիշերուայ մութի ու խաւարի մէջ երեւակայական «գըլխարկների, թաշկինակների» ծածանիլը տեսնել, այդ միայն ձեզ նման հրաշագործների°°° բաժինն է։

Կրկնենք, փոխանակ այն բարի մաղթանքների, Հայ ժողովուրդը հետեւեալ տխուր եւ ճշմարտութիւն արտայայտող հառաչանքներով ճանապարհ դրեց — Գնացէ՛ք, գնացէ՛ք, էլ յետ չը դառնաք, կերա՛ք մեր աղն ու հացը, խըմեցիք մեր ջուրն ու գինին, եւ չխնայեցիք մինչեւ անգամ . . . . ։

Ահա՛ւասիկ Ատրպատականի հայերի հիւրասիրութեանը, վեհանձնութեանը ի՛նչ կերպով փոխարինեցին մեր «ազգակերներ»ը ։

(Շարունակելի) ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԵՌԱՏԵՍ ՔՆՆԱԴԱՏՆԵՐ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ

Կատուի ձագերուն պէս, անանկ միջավայրի մը մէջ, ուր քննադատութիւնը, արդիւնք՝ ընդհանրական զարգացումի, կը պակսէր, սկսան երերակալ անդոյն ներկայացուցիչները Պոլսոյ դիակ մամուլին, «Արեւելք»ին ։

Ասոնք, հոն, Ցէմիլ ճիպաչեան բառարանին օգնութիւնով, յաւիտենական մեքենաներ էին թերթօն թարգմանելու, և եթէ երբեմն իրենց ծիծաղելի մէկ արտադրութիւնը «Արեւելք»ի աղբանոցին մէջ երթար գիզուելու կամ կուտակուելու, հասարակութիւնը սպասող միաքի մը ամբողջ կատակերգութիւնը հո՛ն կանխադուշակելով, արդէն իսկ կարդալու ձանձրութիւնն ալ յանձն չէր առներ ։

96 ի ցոյցը ասոնք արտասահման նետեց, ուր իրենց առաջին տգեղ արտադրութեանց հանդէպ ո՛եւ է քննադատութիւն չը տեսնելով, ա՛լ սկսան գլուխ ցուցնող փորձանքներ դառնալ, մէջտեղ նետելով հարցեր, խնդիրներ, որոնք ժողովուրդը եւ ո՛չ մէկ բանով կը հետաքրքրէին, ժողովուրդը հիմակուան սա արիւնաթաթաւ խեղճութեանը մէջ։ Իբրեւ գրականութիւն ·Արեւելք»ի ներկայացուցիչներէն մէկը, Վառնայի մէջ մէջտեղ կը նետէր յօդուածներու չարք մը, փախստականի տպաւորութիւններ, որոնք արուեստը կը լլրճէին, որոնց մէջ կեղծաւոր հայրենասիրութեան մը զեվզեկ հառաչանքը կը ճզար և որոնց ամբողջութիւնը ամենաթանկ օրինակներէն մէկն էր սափակ գրականութեան ։ Բայց քննադատութիւն չի կար, և այդ պատուելի բանաստեղծը ա՛լ գրական սահմաններէն ալ ելլալով ինքզինքը ժողովրդային հարցերու զարկաւ, անիմաստ, բառալից, լմոր յօդուածներ, երեն իսկ բառովը, ծխելով ։ Ազգանուէրն գրագիրութեան մէջ, ճոռոմ ասացուածքի ի՛նչ յաջող օրինակ սա ծիծաղելի սկզբնաւորութիւնը ազգ. ընթերցարանի վրայ գրուած յօդուածի մը. ·Զարաբաղդութիւն մը կը հեծնայ այդ տառամասեալ շէնքին վրայ . . . . ։ ›

·Արեւելք»ի ներկայացուցչին գըրած ընդունելութենէն խրախուսուած, ուրիշ անծանօթ մըն ալ բուսաւ Գամեր-Արշաւիր ծածկանունով ։ Այս վերջինը ասենով չատ պահպանողական էր, ապակեդրոնացումը ընդունելէն ի վեր սաստիկ ազատական եղած է ։ Եւ այս անակնկալ հոգեփոխութեան այնչափ հաւատալս չի գար որ, երբ հիմա, անոր «տաւղթիմական» խմբագրականները կը կարդամ, պարզապէս ինծի գէշ կատակ մը կամ սատրագրութեան կեղծիք մը կը թուի տա Գամեր-Արշաւիր անունը, որ անցածին մէջ, ապուշ ու զաւանցական յօդուածով մը Մազմանեանին մէկ դամբանականը կը քննադատէր ։ Օ՛հ, ալ կ՛արժէ՞ զբաղելու այս անմիտուս մարդով, որ տառասխալ կը գրէ և ոտանաւոր կը հազայ...։

Հիմա, սա երկու գծած պատկերներովս, տիպարներ կեղծիքի և անձնաւորուած խեղճութեան, կուզեմ վեր հանել, հոս, Վառնայի մէջ, խմբագրութիւնը և անոր կատակերգակները ։ Երեւակայեցէք որ հիմա ասոնք խմբագրապետներ են թերթի մը, և երեւակայեցէք որ այդ թերթը հայուն հինգդարեայ թօղ ու քծնող բալքերը պիտի ձաղկէ. Եւ երեւակայեցէք որ նոյն ապիկարները, նոյն թզուկներն են որ, իրենց խելքէն ու իրենց հասակէն մեծ խոստումներով ուռած ու փքած, հայ ժողովուրդը կը խաբեն ու անոր արիւնը կը խմեն ։

Չէ՛, չա՛տ անհունապէս բարձր է խմբագրութիւնը իրենցմէ, և աղէկ կ՛ընեն, հեռաւոր քննադատներ ըլլալէ առաջ, կարճատես ինքնադատներ ըլլան ու ճանչնան ինչ որ կայ ծիծաղելի, իրենց խմբագիր ըլլալուն մէջ. աղէ՛կ կ՛ընեն որ է՛ն առաջ ճանչնան խմբագրութիւնը, ճանչնան ինքզինքնին և անոր համեմատ բան մը գրեն, փոխանակ ապուշ բառերով համեստ արտադրութիւններ դատափետելու ։

Եւ սակայն ձեզմով զբաղելու փափաք չունինք, անմիրուս բարեկամնե՛ր . . . ։

ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ՕԳՆԵՆՔ ԽՐԱՐՈՒ

Անցան ցոյցերը ամուլ, մահաբեր
Անցան սեւ օրեր, ցրուին արդ ամպեր
Տաւրոս սարերէն կուգայ արձագանք
«Հայե՛ր, հայորդի՛ք, ա՛լ միմեանց մօտ
գանք»։

Ալ հերի՛ք ողբեր երեմիական.
Խորհի՛նք ապագան, խորհինք եւ ներկան
Գործե՛նք անկաշառ, գործենք անվրհատ
Ճանչնայ թշնամին ամէն հայ անհատ։

Զըլլանք յուսահատ, թէպէտ ցարդ անոք.
Մեր ցաւերն բընաւ օտարին չեն հոգ.
Կռուի ասպարէզ է կեանքը արդէն
Եւ մեր խնդրոյն մէջ կնճիռներն բարդ են։

Անջատ ոյժերով անզօր ենք իրաւ
Տեսանք ետութիւնն, ա՛խ, ինչե՛ր բրաւ
Բայց Մ. միութեամբ երբ մենք զօրանանք
Է՛հ, կրնանք ընել թշնամին սրնանկ ։

Բիրտ ոյժն է մեր դէմ մեր մեծ ախոյեան
Մարտ մղէ անդուլ քաջ սերունդ հայկեան
Սուրբ ազատութեան վեհ սիրով վառուած
Օգնենք իրարու, կ՛օգնէ մեզ Աստուած։

ՕՇԻՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՄԵՐ ԱՆՑԵԱԼԸ

Առ Վ. Ց.

1898 Ապրիլ 7, Սօֆիա

Ա.

Ահա՛, սեւ վարագոյրը կը պատռի տեսարանի մը վրայ, որ զարհուրելի երեւոյթ մ'ունի, կը տեսնենք կարգ մը մերկացած բաղդախնդիրներ, որոնք այնքա՛ն ատեն մութին մէջ մնացին, մութին մէջ գործեցին եւ մութին մէջ . . . ո՛հ, մի՛շտ մութին մէջ փնտռեցին տեղ մը հայութեան կարեվէր սիրտը ծակելու։

Ատո՛նք . . . այդ մարդիկ՝ որ մեր ցաւերուն անկարեկիր էին եւ գուցէ մեր ծայրայեղ թշուառութեան ալ անգիտակից, այո՛, այդ մարդիկ կուսակցութիւններ ստեղծեցին, որոնք իրարու վրայ ա՛յնպիսի նայուածքով մը սկսան նայիլ, ինչպէս կը նայի սարսափահար անցորդ մը, երբոր սեւ իժ մը կը նշմարէ իր ոտքերուն տակ։ Գթալի բան. փոխանակ Թուրքին դէմ զինուելու որ կ'սպառնար իրենց գոյութեան. փոխանակ մեզ բնաջնջել ընող, թշուառացնող եւ հարստահարող կառավարութեան դէմ բողոքելու, սկսան իրարու դէմ կռուիլ, զիրար հալածել եւ իրարու գաղտնիքը դուրս թափել . . . ։ Եւ յետո՞յ . . . յետոյ միան ժողովուրդի մութ խաւերու մէջ, անուշ լեզու գործածեցին, շողշողուն յոյսեր տուին, գեղածիծաղ նկարագրութիւններ հրատարակեցին, զէնքի համար դրամներ պահանջեցին, հայդուկային խումբերու համար գումարներ պէտք են ըսին եւ կրցան հազարաւոր ոսկիներ թափել եօթ գլխեան հրէշի փորին մէջ, որ Պիւռօ կ'ըսուի։ Այս բոլորը յաջողեցան ընելու, երբոր անդին հայութիւնը արցունքի տեղ իր երակներու արիւնը կը պարպէր եւ յիսուն հազար որբերու աղիողորմ ձայնը մինչեւ երկինքը կը բարձրանար։

Այո՛, այդ բոլորը խղճի կատարեալ հանդարտութեամբ ըրած էին անցեալին մէջ, կը գործեն ներկային մէջ եւ կը պատրաստուէին ապագայի մէջ ալ նոյնը ընել։ Բայց արդարութիւնը չը թողուց։ Որբերու անէծքը շանթ մ'եղաւ եւ զարկաւ պատռեց այն վարագոյրը, որուն ետին կուզէին ծածկել այնքա՛ն ստորին շահատակութիւններ։ Այն խորունկ վէրքը որ ժողովուրդի սրտին մէջ փտախտի մը պէս կ'իջնար, արդէն կը բացուէր եւ ամբողջ հայութիւնը կզգար թէ այդ վէրքը ուսկի՛ց ստացած էր։

Ո՛ւշ, շատ ուշ զգացինք, բայց կարող ենք դարման մը խորհիլ։ Անցեալի դառն փորձառութիւնը մեր աչքին առջեւ բերելով, խոստովանինք մեր ունեցած սխալները, ցուցնենք իրարու մեր վէրքերը, բանանք իրարու մեր սրտերը, վանենք մեր հոգիէն կուսակցական ատելութիւններ եւ իրարու ձեռք կարկառելու փութանք։ Այս է, այո՛ այս է միակ փրկարար միջոցը, անօգուտ է ամբողջ ազգը պառակտելով, իմ կուսակցութիւնս արդար է, քու կուսակցութիւնդ ալ մեղաւոր է ըսելով զիրար նախատենք, և՛ ուղտը կլլել յետոյ, մժեղը քամելով սրբութիւն ծախելու միջոցներ մտածենք։ կարծեմ այդչա՛փ միամիտներ քիչ կը գտնուին, — եւ գտնուածներն ալ ձեզ չեն կրնար կշտացունել, — որոնք մինչեւ հիմա հասկցած չեն բոլոր դարձուածքները։

Տեղն է յիշատակելու իրական բայց ցաւալի խօսութիւն մը, որ գուցէ պատմական փոքրիկ նշանակութիւն մ'ունենայ այն բանասէրներուն համար, որոնք անշուշտ կը բաղձան կէտ առ կէտ նկարագրել մեր յեղափոխութեան թէ՛ անցեալը և թէ՛ ներկայի ամբողջ դարձուածքները։

Օր մը դիպուածով մը հանդիպեցայ Մշեցի երիտասարդի մը։ Սրճարանի նստարաններուն վրայ ինկած, տխուր, վշտաբեկ և յուսահատ կացութեան մը մէջ կը մտածէր։ Հազիւ երեսունի մօտ, կոբուփ կազմուածքով, լայն ճակատով, որուն վրայ թշուառութիւնը խորո՛ւնկ, կսկծալի՜ և դա՛ռն ակօսներ բացած էր, քաղցր ու համակիր կերպարանքով և հայրենիքի անուշութիւնը պահող կարիճ մըն էր։ Մօտեցայ անոր նստած փէճին ու մէկ անկիւնը կանչելով հարցուցի.

— Ինչո՞ւ այդպէս կը մտածես, եղբա՛յր։

— Ի՞նչ անեմ, ղուրպա՛ն, չեղիր որ չը մտածեմ։ Աստուած ենպէ՛ս զուլումներ թափեց մեր վրէն որ մոռնալով էլ չեղիր, մտածելով էլ, պատասխանեց Մշեցի երիտասարդը սրտէն ցաւագին հառաչանք մը հանելով։ Ես էլ կինամ թէ մտածելով ճար մը չեղիր, բայց սիրտ է, ի՞նչ անես որ չը դիմանար։

Այս տխուր ու յուսահատական խօսքերը Մշեցին իր լեզուով, իր կսկծալի բացատրութիւնով ըրաւ։ Իր սիրտը կարծես ուռած էր և կ'ուզէր պոռթկալ։

— Ցոյսդ մի՛ կորեր, եղբա՛յր, Աստուած կայ, հարկաւ օր մը մեր ողբալի ձայնը կը հասնի իր արդարութեան . . . ։

— Մեռնի՛մ Աստծու արդար դատաստանին, ո՞ւր է, յօ՞րին կ'ուշանայ . . . էլ ի՞նչ մնաց հայանական ազգին։

— Աշխատիլ պէ՛տք է։ Աստուած մարդուս ազատութիւնը արեւու ճառագայթին պէս չը ղրկեր երկինքէն։ Չը կայ ազգ մը որ առանց արիւն թափելու, առանց թշուառութեան տոկալու, առանց կորուստներ տալու գտած ըլլայ իր ազատութիւնը։ փոխանակ սրճարանի փէճերու վրայ մաշուելու, գնա՛, հայրենիքիդ թշնամին գտնելու, գնա՛ քու արդար իրաւունքդ ձեռքովդ պատրաստելու. գնա՛, մտի՛ր այն լեռներու մէջ ուր ամեն տեսակ ոճրագործութիւններ կը կատարուին, ուր քու պատիւը կը բռնաբարուի, քու թշուառութիւնդ կը պատրաստուի և քու հայրենիքի օձախ քանդողը հիմակ ազատօրէն կը նայի մեր աւերակ երկրին վրայ։ Գնա՛, որո՞ւ կը սպասես, եղբա՛յր։

(Շարունակելի)

ՇԱՐԺՈՒՄ

ԵՒ ԻՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

«Շարժում» արտատպելով «Սիլաս»ի երկու լրտեսական նամակները, առանց այդ նամակաց պարունակութեան ստուգութիւնն հաստատող իրական փաստերու, զրպարտիչ և աղտոտ գրչաւ մը դաւաճան, մատնիչ մակդիրներով «Տաւրոս»ի խմբագիրն ու աշխատակիցն անուանարկելու անխոհեմութիւնն ունեցաւ։

Ժողովրդեան մտային ու բարոյական զարգացման սատարելու կոչումն ունեցող խմբագրութենէ մը կը պահանջուէր, որ իրողութիւններն և մանաւանդ հանրային ըղգացման վրայ ներգործող երեւոյթներն ու դէպքերն, իրենց յարակից ամէն հանգամանքներով և ամենանուրբ հետազօտութեամբ ուսումնասիրելէ վերջ, հաստատուն կռուաններու վրայ յենած՝ եզրակացութեան մը հանգէր և կամ ճշմարտութիւնն ի յայտ բերէր, անոր հրապարակային դատավճիռն հանրային ընկերական դատաստանին վերապահելով։ Սա ա՛յնչափ բացորոշ և անվիճելի է, որ առանց այս պայմանին գոյութիւն ունեցող մի թերթ միշտ հանրային դատապարտութեան կ'ենթարկուի և հանրութեան զզուանքը կը հրաւիրէ իր վրայ։

Դժբաղդաբար «Շարժում» իր սխալ քայլով հանրութեան անաչառ և խիստ դատաստանին ենթարկուելու դժբաղդ հարկին մէջ գտնուեցաւ։ Արդէն վաղուց նախատեսուած էր, որ «Շարժում»ի խմբագրութիւնը «Տաւրոս»ի բազմամեայ գործիչ-խմբագրին և անոր արգոյ աշխատակցին հանդէպ խուլ հակակրութիւն մը ունէր։ Ասոր պատճառը որչափ մեզ ծանօթ է, «Տաւրոս»ի՝ անկերպարան և անկազմակերպեալ յեղափոխական փտասակար շարժմանց հանդէպ՝ ունեցած հակայեղափոխական ուղղութիւնը, որով Տ. Զաքըրեան իրաւամբ անխնայ կը ձաղկէ և կը հարուածէ յեղափոխութեան դիմակին տակ կրծկուող դիմակաւոր ինքնակոչ պետերն ու գործիչները, որք իրենց յախուռն ու անխոհեմ քայլերով, վիժեցուցին հայկական յեղափոխութիւնը և ժողովրդեան բարելաւ և օգտաշատ տրամադրութիւնները մասամբ ամլութեան դատապարտեցին, ոչնչացնելով նաեւ յաջողութեան շատ մը կռուաններ։

Զաքըրեան, թէեւ քանի մը Դաշնակցականաց և Հնչակեաններու պէս ճեմարանի և համալսարանի հոյակապ կրթական հաստատութիւններ տեսած չէ, սակայն հայրենիքի հարազատ և արժանաւոր զաւակն ըլլալով, իր երկրին պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ռազմական դիրքը և ուրիշ հանգամանքները, և ազգային տոհմական, յատկանշական նկարագիրն ու հոգեբանութիւնը շատ մը համալսարանականներէ և ճեմարանականներէ աւելի լաւ ուսումնասիրած ըլլալով, մեր կարգ մը յանձնապաստան իտէալիստ յեղափոխականաց տոնքիշոտական երեւակայութեանց և վերացական անհաշիւ ենթադրութեանց բոլորովին հակառակ՝ լաւ համոզուած է, որ Հայրենիքի ազատութեան գործին յաջողութիւնը ինքնաճանաչութեան գաղափարի զարգացմամբ, գործնական լուրջ քայլերով և ժամանակայարմար գործունէութեամբ կը լինի։ Անխոհեմ և աննպատակ շարժումներու հետեւանքով թափուած շիթ մը արեան պատասխանատուութիւնն անարդարանալի է պատմութեան առջեւ։ Ահա՛, այս լինելով իր ուղղութիւնը, Զաքըրեան անխնայ հարուածեց և պախարակեց հայրենասիրական այն անխոհեմ քայլերն ու շարժումները, որոց արդիւնքն եղան Ազգ. Նիւթական և բարոյական նորընծիւղ ուժերու անփոխարինելի կորուստը, տնտեսական տագնապը, և հայութեան ներկայ խեղճ վիճակը։ Զաքըրեան մասնանիշ ըրաւ կարգ մը գործիչներու մեր ազգային և քաղաքական պատմութեան մէջ ունեցած անհմտութիւնը, որով այս վերջինք կրկնեցին ու բազմապատկեցին այն սխալները, որոնցմով հայրենիքը յանցելումն ոչ նուազ անգամներ վտանգուեցաւ։

Թէեւ Զաքըրեանի ուղղութեան համամիտ էին ժողովրդեան լուրջ ու խոհուն դասակարգը և յարգելի փորձ գործիչներ, սակայն մէկ կողմանէ ժողովրդեան՝ կուրօրէն զինքը քշող տանող հոսանքին անձնատուր ըլլալը, եւ միւս կողմանէ անփորձ յեղափոխականներու ի գործ դրած ապօրինի միջոցները, բռնութիւններն ու ճնշումները, խոչընդոտներ կը լինին գաղափարի տարածման դէմ։ Լրագրական ընդհանուր եւ անհատական մասնակի ջանքերն կուսակցութիւններէ եւ զառնազգեստ գայլերու մեքենայութիւններէ ամլութեան մատնուած էին. ողջամիտ հայրենասէրներու հասցէին ուղղեալ սպառնալիքներն անպակաս էին, եւ շատեր իսկ զոհեր դարձան կուսակցական սուր հալածանքներու։ Խաչատուր կարեկցեանի՝ կարինոյ նշանաւոր եւ բազմամեայ գործիչին վրայ գործադրուած յանէտ դատապարտելի ոճրագործութիւնը պերճախօս փաստ մ'է մեր ըսածներուն։

ՍԻՒՆԻ

(Շարունակելի)

(Շարունակութիւն Ս. երեսէն)

ւանագիտական հնար մը գտնելով կ'ըսէ թէ «Մինչեւ Ձեր այս տեղ հանիլը իրաւունքը Ձեր կողմն էր և Ձեզ գոհացում պիտի տրուէր, բայց դուք քանի որ իմ ներկայութեանս իմ կառավարութիւնը կ'անուանարկէք՝ այլեւս գոհացում ըստանալու իրաւունք չունիք ևն. ևն»։ Եւ ագկէ եաքը կ'աշխատի ինչքան կարելի է դիւանագիտական խորագիտութեամբ գործին մէջէն դուրս ելնելու աշխատիլ։ Այդ միջոցին, հայը սուրբին հիւպատոսարանը ըլլալը լսելով՝ այն տեղ կը հանին տեղւոյն աւագերէց Տ. Կարապետ հայրը, Թաղ. խորհրդոյ ատենապետ Տիար Յակոբ Հաճի Ստեփանեան և Տիար Գրիգոր Կարապետեան, երբ հիւպատոսը զանոնք կը տեսնէ կ'ըսէ թէ՝ «Տէր հայր, ես Ձեր խաբերը համար այս անձի անցագիրը վաւերացուցի, թէեւ հայելու Ռումանիա մուտքը արգիլուած էր, բայց ես բացառութիւն ըրի Ձեզ» «Ո՛չ, Պ. հիւպատոս, կը պատասխանէ հայը սուրբը, ես երբէք չէի ընդուներ որ իմ ազգիս մուտքը արգիլուած երկրի մը մէջ ինձ համար բացառաբար արտօնութիւն ըլլար մտնելու, ես Ձեր Տէր հօր տուած ապահովութեան վրայ յենլով Ռումանիայի ճամբով անցնելու համաձակեցայ, ուրիշ կերպ չէի ուզեր և չեմ ալ ուզեր Ռումանիա մտնելու»։ Հիւպատոսը հասկցնել ուզելով կ'ըսէ, «Անցագիրդ վաւերացնելով թէեւ բացառութիւն մ'ըրած եմ, բայց այս միջադէպը տեղի ունենալէ յետոյ չեմ կարող այլեւս ինձ եկած հրամանին հակառակ շարժիլ և սահմանուած եմ վաւերացումս չնչելու։ Այն տեղն հայը սուրբը ոտքի կենալով՝ Շնորհակալ եմ Պ. հիւպատոս կ'ըսէ, գիտէի արդէն որ այս հեռեւանքը պիտի ունենար, որովհեռեւ ինձ պատասխանատուներէն և Ձեր Պ. քարտուղարի ընթացքէն այդ գուշակած էի, զի այդ Ձեր Պ. քարտուղարը, շրջեռնային մէջ ինձ հետ Ռումանիոյէն տեսակցելէ եաքը, այս առաւօտ ինձ ասելով կ'ըսէր թէ՝ «Դուք երէկ կ'ըսէիք թէ ռումանիոյէն չէք գիտեր, բայց այսօր լսեցի մաքսապետէն թէ լաւ ռումանիոյէն կը խօսիք եղ՝ր, տակէ զատ երէկ շրջեռնային մինչեւ Ռուսչուքի նաւամատոյցէն մեկնիլը Աւժ. Տ. Կարապետ հայրը, ուրիշ քահանայ մը և Պատ. Թաղ. խորհրդոյ Տիար ատենապետը ինձ հետ նստած էին, ան տեղն հարկաւ չէի կրնար անպատիւ մարդ մը ըլլալ, բայց երբ երէկ՝ այդ անտարբերը նամակին վրայ յենլով զիս կը հարցաքննէին, խնդրեցի իրմէն, որ պատճառը յայտնէ և գործը շուտով վերջացնելով և զիս ճանապարհորդութենէս ետ չձգելու համար միջնորդէ, բայց ան մերժեցաւ»

Հայը սուրբի այս խօսքին վրայ հիւպատոսը քարտուղարը կը կանչէ և կը հարցնէ թէ «Դուն իրաք Տէր Կարապետին և ուրիշ մէկ քահանայի մը հետ հայը սուրբը տեսա՞ր», քարտուղարը անամօթաբար կը պատասխանէ, ո՛չ։ Ատկէ եաքը հիւպատոսարանէն կը մեկնին հայը սուրբը և իրեն ընկերակցողները։

Առ այժմ չենք գիտեր թէ՝ հայը սուրբը և Թաղ. խորհուրդը ի՞նչ ընել մտադիր են, հետեւանքը առաջիկայն կը գրեմ։

Վերոգրեալ թղթակցութենէն և արուած տեղեկութիւններէն կը հասկցուի թէ՝ այդ անատրագիր ռումաններէն նամակը անպատճառ կանխամտածմամբ պատրաստուած դաւագիր մ'է, հայը Աբսէն վարդապետի կեանքին ու պատոյն դէմ գործող ներքին թշնամի ցեցերու և բարոյազուրկ սրիկաներու. անշուշտ խմբագրութեանս հետ, մեր յարգելի ընթերցողներն ալ այս նամակը կարդալէ եաքը՝ չը պիտի կրնան զսպել իրենց զայրոյթը և սրամտանքը այսպիսի մի ստոր և պոռնկային դաւադրութեան մը հանդէպ, որն որ ոչ թէ մասնաւոր անձ մը, ինչպէս հայը Աբսէն վարդապետի, այլ ամբողջ ազգի մը կը վերաբերի։ Թէեւ մեզ գրուած այդ նամակէն չը հասկցուիր թէ՝ ի՞նչ պիտի ընեն Ռուսչուքի կրօնական և աշխարհական Պատ. ներկայացուցիչները, միայն կը յուսանք թէ՝ թէ՛ Աբսէն վարդապետ և թէ՛ թաղական աղայք պիտի ջանան այդ դաւադրութեան հեղինակները գտնելու և այդ պարտաւորութեան կատարումը կը թողունք տեսնել որքան կարելի է շուտ։

Իսկ մենք մեր կողմանէ աչքի առջեւ ունենալով հանդուցեալ Մը-կրտիչ վարդապետ Տէրտէնեանի վախճանը, հիմնասիւնէ կոչում կը-նենք Պուլկարիոյ ամբողջ հայ գաղութին, ըլլամիա և ըլլախոհ հայ եղբարց, որ այսպիսի ծանրակշիռ պարագայի մը մէջ, հայութեան պատիւը փրկելու համար իրենց պարտականութիւնը ճանչնալով՝ այդպիսի քսամենի դաւադրութեան մը հեղինակները գտնելու համար, բարի նախանձախնդրութեամբ գինուած միջոցներ ձեռք առնեն, դադրեցնելու Աբսէն վարդապետ իրեն դէմ եղած այդ անարգանքներուն և դաւադրութեան կարեւորութիւն չը տայ, սակայն մեր ամենուս և մանաւանդ պուլկարիոյ պատուազգաց հայոց պարտականութիւնն է աշխատելու այդ մութի մէջ գործող իժերու, էնկերեֆ ըսուած օձերու խայտառակ երամակը երեւան բերելու, որպէս զի մեր անուշադրութեան, անհոգութեան և անտարբերութեան դատապարտելի պատճառով։ կամ. այցելու հովիւ երկրորդ վարդապետի մը արեան պարտքը չը ծանրանայ իրենց վզին վրայ, որտին մէջ, հոգւոյն մէջ։

Ի նկատի ունենալով խնդրոյն ծանրութիւնը, կը յուսանք որ Պուլկարիոյ հայ թերթերը մէկ կողմ թողլով իրենց կուսակցական փծուն և զազրալի հաշիւները, պիտի ձայնակցին մեզ, պուլկարահայոց ճանչցնելու համար իրենց աւագ և նուիրական պարտականութիւնը, որ է երեւան բերել այդ ծպտուն և գարշելի դաւադրողներու անբարոյ ընկերութիւնը, որոնք ազգին այսքան չարաբախտութեանը պատճառները եղան, և դեռ կ'ուզեն ալ ըլլալ։

Ուրիշ տեսն աւելի ընդարձակ պիտի խօսինք այս մասին, հիմակուհիմա այսչափ, մարդու ականջ ուներողներուն։



ՏԻՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԿԷՄԻՃԵԱՆ

Վառնայի դեռափթիթ ծաղիկներէն մին, երիտասարդ Կարապետ, 27 տարեկան, իւր հօր եւ մօր մէկհատիկը թոշնեցաւ ու ինկաւ գետին։

Կարապետ ա՛լ չի կայ, նա բաժնուեցաւ մահուամբ իր բոլոր սիրելիներէն։

Սգացին որդեգորով ծնողքն, ողբացին ազգականներն, վշտակրեցան բոլոր բարեկամք ու ամբողջ Վառնան։

«Տաւրոս»ի խմբագիրն իր ցաւակցութիւնը յայտնեց ու յարգանքները բացատրեց բարեյիշատակ հանգուցեալին զաւակին վրայ իր յատուկ Ձեյթունական ոճով. ցոյց տալով թէ յիշատակելի կեանքը երկար ապրելուն մէջ չէ, այլ բարի ու ազնիւ գործառնութեան, կարճ թէ երկայն բարեմտութեամբ ու բարի գործողութեամբ է որ մարդ կարող կը լինի իւր անունը անմահացնել, թէպէտեւ մարմինը, միսն ու ոսկորը կը փտին։

Կարապետ ողջ է իր համակրելի յիշատակովն եւ մենք կը մաղթենք իր սգաղգեցիկ ծնողաց եւ վշտակիր ազգական ու բարեկամաց երկնառաք մխիթարութիւն եւ նորա հոգւոյն հանգիստ ու անթարշամ պսակ արքայութեանն Աստուծոյ։

ԱԶԳԱՅԻՆ

Վառնայի Պատ. Թաղ. խորհուրդէն պաշտօնական գրութիւն մը եկած է մեզի հրատարակութիւն, որով կը յայտարարի թէ, Գէորգ Հիւրմիւզեան անուն քահանան, որ ժամանակէ մը ի վեր եկեղեցւոյ մէջ կը պաշտօնավարէր, իր սքեմին եւ իր կրօնական պարտականութեանց դէմ գործած ըլլալուն համար, այլեւս դադրած է պաշտօնավարութենէ։

Կը գովենք Թաղ. խորհուրդի այս որոշումը, սակայն աւելի պիտի գովաբանէինք զիրենք, եթէ կանխապէս ձէթով մկրտութիւն կատարող եւ Ցունաստանի մէջ խեղճ գաղթականները, եկեղեցի պիտի բանամ. պատարագ պիտի ընեմ ըսելով՝ բաւական կոկիկ գումար մը շորթելով առաւ փախաւ դրութեամբ Վառնա եկած ատեն, զինքը եկեղեցւոյ շրջափակին մէջ իսկ չընդունէին. սակայն այսու ամենայնիւ Պատ. Թաղ. խորհուրդին լաւ կարգադրութիւն մը ըրած ըլլալը կը յայտարարենք։

ՍՊԱՆԻԱ ՎԷ ԱՄԷՐԻԳԱ

ՄՈՒՇԱՐԷՊԷՍԻ

Հավանական չէ՛ քիլէն պիր թէլէկրաֆ Բարաքնաս էսնիւնտէ պիր Ամէրիգա կէմիսինտէ վուգուա կէլէն գազայը թաստիգլէ, թէլէֆիաթ ատէտի 18 նէֆէրտէն իսպարէթ պուլընարլը պէյան խիյոր։

* * *

Բորթօրիգոական Մայիս 18 թարիխլէ, Ժէնէրալ Մասիաս թարաֆընտան չէ՛քիլէն պիր թէլէկրաֆ նազարէն՝ իքի կիւնտէն պէրի լիմանա հիչ պիր կէմի կէօրիւնմէմիշ տիր։

* * *

Չոնկ քոնկտան Մայիս 18 թարիխլէ չէ՛քիլէն պիր թէլէկրաֆ կէօրէ՝ լիմանա էճ՛էպի կէմիլէրին տուխուլի մէնն օլընմըշ տըր։

* * *

Բավիթին զապիթնատան սոնրա Ամէրիգալըլար արսէնալը պօշ պուլմըշլար տըր։

Բօլնէլ Մ'ինքէլ արսէնալին հիչ պիր շէ՛յի հավի օրմանտանան տօլայը քէնտիսինի թէլէֆ իթմիշ տիր։

Մ'անիլիա ըէ՛յիս հիւքիւմէթի թէվատութլէ հիւքիւմէթ մէմուրիյէթլէրինէ եէրլիլէրին ատխի թային օրընտաղընա միւտատէ կէօսթէրմիշ տիր։

* * *

Սանթա Ղիւսիատան իսթանիկ—Ուռուա կազէթասընա չէ՛քիլէն պիր թէլէկրաֆ նազարէն՝ տատանը զարպ տահիլինտէ պէօյիւք պիր զըրհը վէ չինարընտա իսէ պիր չոգ տաիր կէմիլէր կէօրիւնմիշ տիր։

Պուենոսարէն Սպանիա կէմիլէրի օրտուպ Ամէրիդանէն Օռկոն զըրհըսընը արամագտա օլտըգլարը զանն իսիրմէ՛քտէ տիր։

* * *

Թայսըն եալ կէմիսինտէն ալընը խապէրլէրէ կէօրէ՝ Սան Ժուան գալէրէրի էհէմմիյէթսիզ սուրէթտէ զէտէլէնմիշլէր։

Բարաբնատան 17 Մայիս թարիխլէ չէ՛քիլէն պիր թէլէկրաֆ նազարէն՝ եալընըզ պիր մանօվրա սէպէպի իլէ Ամէրիգա կէմիլէրինէն պիրիսինտէ տէհշէթլի պիր սատէմ զուհուրլա 17 քիշի զայ օլմըշլար։

* * *

400 մէհաճիրի համիլ պիր ինգիլիզ կէմիսի Մ'անիլիայա վասըլ օլըպ Քոնքօրտա վէ Պօսթոն նամ կէմիլէրին իլօ իլօ սուլարընա կիթտիքլէրինի նագլ իթմիշ տիր։

Մ'անիլիանէն մուհասէրէսի բէք շիտատէթլի իմիշ։

ՄԻԻԹԷՖԷՐՐԻԳԱ

— Վօլօ թարիգի իլէ 70,000 քիշինին վէ 9000 աթըն նագլը իչիւն 25 կէմի թախսիս օլընտրզը Պապը Ալի էլչիլէրէ պէյան իթմիշ տիր։

— Բէթէրսպուրկտան ավտէթ խէն ճէվատ բաշա Սուլթանտա պիր չոգ գըյմէթլի հէսիյէլէր կէթիրմիշ տիր։

— Վիւքէլա մէճլիսի Թէսալիանէն թախլիյէսինէ սուհուլէթ օրմագ իւզրէ նագլիյէ կէմիլէրի օրայա կէօնտէրիլմէսի իչիւն գարար վէրմիշ տիր։

Печат. Войниковъ Варна.